ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

Լերմոնտովո համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 18-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; Անտառաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ռաֆիկ Խառատյանը, համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N25/՝

1. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Քոչարյան

2. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

3. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

4. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ. Ռ.Խեչումյան

5. ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Քոչարյան

6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

7. ՀՀ ԼՄ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Քոչարյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Արսեն Քոչարյանը: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը, որը համայնքի ավագանու անդամները ընդունեցին ի գիտություն:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N26/

2. ԼՍԵՑԻՆ - ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց քաղաքաշինական Կանոնադրության ընդհանուր դրույթները՝ առանձնահատկությունները, շինությունների ոճը, քաղաքաշինական փաստաթղթերը, գովազդների տեղադրման պայմանները, կառուցապատողների իրավունքները և այս ամենի վերահսկման կարը: Ավագանու անդամները քննարկեցին և տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N27/

3. ԼՍԵՑԻՆ - ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը, որը ներկայացրեց համայնքի հողերի բաշխվածությունը ըստ հողատեսքերի և նպատակային նշանակության:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N28/

4. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը: Նա բացատրեց, որ անհրաժեշտ է, որպեսզի ավագանին հաստատի համայնքի աղբահանության և սանիտարական

մաքրման կարգը. աղբահանության օրերը, աղբարկղների տեղադրման հասցեները: Ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը ներկայացված նախագծին:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N29/

5. ԼՍԵՑԻՆ - ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ նախագիծը

--ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Արսեն Քոչարյանը: Նա բացատրեց միջնաժամկետ ծախսերի ծրագրի ընդունման անհրաժեշտությունը, ներկայացրեց համապատասխան ցուցանիշները և ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N30/

6. ԼՍԵՑԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը, որը տվյալ հողամասի վարձակալը ցանկանում է գնել: Ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը նշված հողամասը օտարել նախկին վարձակալին:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N31/

7. ԼՍԵՑԻՆ ՀՀ ԼՄ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ նախագիծը

--ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Արսեն Քոչարյանը: Նա ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի Մշակույթի կենտրոնի հաշվապահի հաստիքի դրույքաչափը 0,5-ից բարձրացնել 1-ի: Ավագանիները տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N32/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ